

**ԱՐՄԵՆՈՒԴԻ ՄԽԻԹԱՐՅԱՆ-ՎԼԻԽԱԿՆՅԱՆ**

# **ՇԱՆՐԱՇԱԾ ԶՐԵՐ**

**ԵՐԵՎԱՆ**



**2018**

**ՀՏԴ 821.19-8 Մխիթարյան-Ալիխանյան**  
**ԳՄԴ 84 (5Հ)**  
**Մ 793**

Նվիրում եմ արցախյան բոլոր հերոսներին և եղբորս:  
Արտավազը Մկրտչի Ալիխանյան /1957-1992թթ./ «Դիզակ» ջոկատի  
հրամանատար, կապիտան: Մասնակցել է Ջրակուսի, Հադրութի,  
Քարինտակի, Ուլուբաբի, Խաչինգետի ազատագրական մարտերին:  
Հավերժացել է Սրխավենդում:  
Հետմահու պարգևատրվել է.  
ԼԴՀ «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշան /1994թ./  
ՀՀ Արիության մեդալ /2002թ./  
Փառք ու պատիվ բոլոր քաջերին:

**Գիրքը հրատարակվել է**  
**Գյումրու քաղաքապետարանի աջակցությամբ**

Մխիթարյան-Ալիխանյան Ա.  
Մ 793 Ծանրացած ջրեր: Արձակ, պոեզիա / Ա. Մխիթարյան-  
Ալիխանյան. - Եր.: Արմավ, 2018. - 72 էջ:

**ՀՏԴ 821.19-8 Մխիթարյան-Ալիխանյան**  
**ԳՄԴ 84 (5Հ)**

**ISBN 978-9939-78-013-9**

© Մխիթարյան-Ալիխանյան Արմենուհի, 2018  
© «Արմավ», 2018

## ԱՆՑՅԱԼԻՑ ՄԻ ԿԱԹԻԼ

Պապս խոսքի մեջ միշտ հիշում էր Ալեքսանդր անունը: Նրա շուրթերից շատ քաղցր, փափուկ էր արտասանվում Ալեքսանդր, և ես՝ մի մատ երեխա, հեքիաթի քաղաք էի պատկերացնում ու չէի էլ կասկածում, թե Ալեքսանդր իմ Լեննագանն է, Լեննագանիս Ալեքսանդր անունն էլ իր երկար ու խորհրդավոր կյանքի ծամփին կնքված անուններից մեկն է: Պապիս պատմած Ալեքսանդրում մարդիկ զբաղվում էին հողագործությամբ, անասնապահությամբ, արհեստներով ու արվեստներով: Հայաստանի երկրորդ քաղաքն էր, էլի՛, հայրաքաղաք էր, էլի՛, ապրելու դժվարություն ուներ, էլի՛ /տեսնես ե՞րբ պիտի չունենա: Պապ-հայր շուրթեշուրթ ինձ հասած, մանանայի նման գազպա բռնած պաշարն ինձ հուշում է. կա մի բան, որով Ալեքսանդր-Գյումրին պահում է իր դեմքը, յուրահատկությունը, համն ու դամը, դա անկրկնելի գյումրեցիներն են՝ միամտության մեջ խորիմաստ, խորիմաստության մեջ միամիտ: Նրանցից մեկն էլ 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին ապրած աղա Գիքոն է:

Զգիտես ինչու Պապոյենց, այսինքն՝ Պապոյաններին կպցրել են «սատանա» մականունը: Այդ մասին զանազան-զարմազան բաներ են պատմվել, բայց ինչ էլ որ պատմել են, հիմքում մի միտք է եղել. Պապոյենք ամեն ինչից, ամեն հնարքով սատանությամբ էլ փող են քամել:

Այս տոհմի կարկառուն դեմքը՝ աղա Գիքոն, առևտուր է արել, վաճառական է եղել, ասում են՝ օձի ձու էլ որ ուզեիր, աղա Գիքոյի մոտ կձարվեր: Թիֆլիսում գիմնազիա էր ավարտել: Նիհար-երկար դեմքով, մի քիչ կլորավուն քթով, միջահասակ մարդ էր աղա Գիքոն, տունն էլ՝ Չորի բողազին: Հեքիաթներ են պատմում նրա կուտակած փողերի մասին: Ուղղակի ֆետիշացման հասնող դրամի պաշտամունք ունի, չի սիրում ծախսել, վայելել, այլ միայն կուտակել: Ի՞նչ է սա, ո՞վ գիտե, միգուցե գենետիկորեն սերմանված, կաթի հետ էության մեջ բույն դրած դրամ չունենալու վախ է: Գուցե աչքը տեսածից է վախենում, ի՞նչ օգուտ տուն-տեղ դնելուց, որը կարող է մի վայրկյանում կորցնել և հաշված ռոպեների ընթացքում կարող է դառնալ շան

բաժին: Ա՛յ, փո՛ղը... ուրիշ բան է փողը. որը կարելի է թաքցնել, որի անտես գոյությամբ իսկ քեզ զգում ես պաշտպանված, թեկուզ հողե խոնավ գետնին նստած՝ քեզ զգում ես աշխարհի տեր: Աղա Գիքոն քաղաքի մյուս աղաներից մի բանով էլ է տարբերվում. դա գործի մեջ ունեցած յուրահատուկ ազնվությունն ասեմ, թե նախանձախնդրություն, տարբերվում է մարդկանց օգնելու խիստ ուրույն ձևերով:

Գյումրիում գարուն է:

Ձմեռը երկար ու դաժան է Հայաստանի հյուսիսում, բայց մարտի վերջից գարնան գոլ է ընկնում, ջերմացնում մարդկանց հոգիները, սեր գցում ջահելների սրտերը: Աղա Գիքոյի հարևան ջահելի՝ Կարոյի սիրտն էլ է սեր ընկել, բայց մուրազին հասնելու համար միջոցներ չունեն, դե քչից-շատից մի բան պիտի անեն, որ տուն հարս բերեն: Շատ մտածելուց, ճար ու հնար փնտրելուց հետո սլաքն ուղղվում է աղա Գիքոյի տան կողմը:

Կարոյի հայրը ծանր ու մեծ թակում է աղա Գիքոյի տան դուռը:

-Բարի՛ աջողում, աղա՛ Գիքո:

-Բարո՛վ, խե՛ր, շա՛ո, ի՞նչ է էղել:

-Է՛, աղա՛ Գիքո, ի՞նչ խեր, երբ գարուն է, բայց մի հատիկ չունիս, թե հողին պահ տաս, ըդպես էլ խե՛ր կեղնի:

Աղան մոայլվում է, բարդ-բարդ հոնքերը կիտվում են՝ փակելով մանր աչքերի փայլը:

-Ասիր՝ վար ու ցանքի հնար չունիս, հա՞...

Մտքում գցում-բռնում է, տալիս-առնում և վերջապես ասում է.

-Լավ, կօգնեմ, փարա կուղամ, վար ու ցանքդ էրա՛: Առաջ Աստված, աշունքը պարտքդ կփազվիս:

Ուրախանում է հարևանը, փութով վերցնում դրամն ու շտապում է տուն:

Առաջ Աստված, հաջորդ կիրակի դիոլ-զուռնայի ձայնը աշխարհ է բռնում: Հանկարծակի աղմուկ-աղաղակից աղա Գիքոն էլ է շփոթվում: Դուրս է գալիս փողոց և իմանում, որ հարևանը դիոլ-զուռնայով գնացել է հարսին բերելու: Կատաղում է աղա Գիքոն՝ փնջացնում.

-Հա՛, ուրեմն դամբուկ-դումբուկ էլի՞...

Նստում է ձին ու ուղիղ հարսանքավորի հետևից, կտրում է թափորի ձամփան.

-Հարևա՞ն, ուրեմն դամբուլ-դումբուլ էլի՞... տո՛ւր փարեքս, հենց հիմա ե՛տ տուր, ես ձեր դամբուլ-դումբուլի համար փարա չունիմ:

Ահա այսպիսին էր աղա Գիքոն: Պատմում էին (ես չգիտեմ, միգուցե չափազանցնում էին լեննազանցու լեն սրտով ու բերանով), թե իբր իր տղայի հարսանիքի օրը աղա Գիքոն հանգիստ քնած է եղել: Երբ դիուլ-զուռնայով եկել դռանը սկսել են աղմկել, արթնացել է՝ բարկացել, դուրս է եկել և... բոլորին վռնդել:

-Ես ձեր դամբուլ-դումբուլի հավեսը չունիմ, ուս՛ի էղեք ձեր տները, չէ՛ մի, դամբուլ- դումբուլ:

Ա՛յ քեզ աղա Գիքո:

\*\*\*

Աղա Գիքոյի ապրելաձևը ասելիք-խոսելիք էր դարձել քաղաքում: Հատկապես գյումրեցի աղաները բարկանում են նրա պահվածքից, հագ ու կապից, տուն ու տեղ պահելուց.

-Ա՛յ մարդ, հըբը աղա կոչվիս, ու տունդ էդ օրին էղնի՞:

-Հա՛, բա՛ վերջին խայտառակությունը չեք լսել:

-Ըսա՛, ըսա՛, տեսնինք հմի՛ ի՞նչ է էղել:

-Մըրսիգը, հիվընդնագը մեր աղեն, վիճակը լավ չի էղնի, տանեցիներն էլ բժիշկ հրավիրենգը: Է՛հ, նստելու մե աթոռըմ չկա, բերենգը աթարները դարս-դարս շարենգը, թե համեցե՛ք, բժի՛շկ ջան, նստե՛ք:

Վրդովվում են, ասում-խոսում, վերջապես նրանցից մեկը որոշում է աղա Գիքոյին «մարդասարահ» խառնել, սովորեցնել, որ միայն դրամ աշխատելու մեջ չէ շնորհքը, այլ նաև համով-հոտով ծախսելու:

Աղա Գիքոյին հրավիրում է իր տուն՝ ձաշի: Պայմանավորված ժամին աղա Գիքոն թակում է հյուրընկալի դուռը: Դուռը բացում է տանտերը՝ կուշտ ու կուտ, կարմիր այտերով, բոլորակ փորին չովսայի վրայից արծաթ-ոսկեջուր քամարը կապած: Ներս է հրավիրում հյուրին, ծանոթացնում է տանտիրուհուն, որն ամբողջովին կորած է լինում խաս ու ղումաշի, ոսկեղենի մեջ: Այստեղ տեղին կլինի աշխարհին հիշեցնել, որ գյումրեցու համար իր հարստության, հաջողության

բարոմետրը իր կինն է եղել: Կնոջ արտաքինը պիտի համահունչ լիներ ամուսնու հնարավորություններին: Այնպես որ էլի տեղին է աշխարհին հիշեցնել, որ ոչ մի ասպետ, այս առումով գյումրեցու հետ ոտք չի կարողացել մեկնել:

Մի խոսքով, չչեղվենք, հյուրը ներս է գալիս, իսկ դրսի դռանը՝ դեմուդեմ կախված է լինում մի մեծ հայելի, որի մեջ արտացոլվում է դրսի դուռը: Աղա Գիքոն ուղիղ գնում է դեպի «դուռը» և ձակատ-ձակատի հանդիպում իր արտացոլանքին: Տանեցիները խոսում հայացքներ են փոխանակում, ներողամտորեն ժպտում են և հյուրին ուղեկցում հյուրասենյակ: Ճենապակյա ու արծաթյա սպասքեղենով հրամցնում են տեսակ-տեսակ համեղ խորտիկներ, ուտում-խմում են, ամեն ինչ լավ է: Վերջում տանտերը թփթփացնում է աղա Գիքոյի ուսին և ասում.

-Աղա՛ Գիքո, աշխարհ մեռնել կա, գնա՛, դու էլ պուձախոջ օջախ դարձրու:

Աղա Գիքոն վերջապես հասկանում է այս ամբողջ բեմադրության նպատակը և պատասխանում.

-Գործի՛դ գնա, թե օր աշխարհ մեռնել կա, իդոնք հետդ չըբդի տանիս,- ցույց տալով տան կահկարասին՝ բարկացած, հիասթափված հեռանում է աղա Գիքոն:

Պինդ «ընկույզ» էր աղա Գիքոն, նրան կոտրելը հեշտ գործ չէր:

\*\*\*

Կոշկագործ ուստա Հակոն ու աղա Գիքոն բարեկամներ են, ինչպես իրենք են ասում՝ մորքուրօղլիներ, այսինքն՝ ամեն մեկը մի քրոջ տղա է: Երկուսն էլ իրար լավ են ծանաչում և իրար ընդունում են այնպիսին, ինչպիսին կան.

-Ա՛յ մարդ, էս ի՞նչ է, շունդ կերավ ընձի, կերա՛վ, չի թողնի, օր տուն մըղնիմ,- ներս ընկնելով Հակոյի տուն՝ բողոքում է Գիքոն:

-Գիքո՛ ջան, արի՛, արի՛, շունն էլ գիդե օր տուն մտնողը սատանա է,- կատակում է ուստա Հակոն, և երկուսն էլ ի սրտե ծիծաղում են: Լստում են, զրուցում, հալ ու քեֆ հարցնում: Որքան էլ ուրախ է ձևանում ուստա Հակոն, միևնույն է, երևում է, որ ինչ-որ բանով մտահոգ է: Զրույցի պոչը երկարացնում, ոտքը կախ է գցում Գիքոն, գուցե մար-

դը սիրտը բանա, մի բան ասի, բայց այդպես էլ ոչ մի բան չի իմանում: Շատ համեստ ու սուղ է ապրում Հակոն, ուրիշների նման չի խաբում, մեկի տեղ տասը չի ասում ու հազիվ է պոչը-պոչին հասցնում: ՌՎ գիտե, հազար ու մի պակասությունների մեջ հիմա ո՞րն էր ավելի շատ նեղում:

Առավոտյան տան ու դռան գործերով զբաղված՝ Հակոյի կինը՝ Արաքսյան, մտնում է թոնրատուն և հենց երդիկից ընկնող արևի ծածանչների մեջ նկատում է մի փոքրիկ կապոց: Խեղձ կինը զարմացած, շփոթված վերցնում է կապոցը, բացում է: Լաթի կտորի մեջ փաթաթված է թղթադրամների բավականին հաստիկ քանակություն.

-Հիսուն Քրիստոս,- խաչակնքում է կինը,- էս ի՞նչ էր, էս ո՞ր բարեկենդանի գործն է, ինչ-որ բան գլխի ընկնելով՝ թոնրատնից դուրս է գալիս կինը:

Երեկոյան ուստա Հակոն՝ կապոցը ձեռքին, հայտնվում է աղա Գիքոյի դռանը.

-Գիքո՛, ծիշտն ըսա, դու ես էրե, թե՞ չէ, հո հրաշք չէ՞,- հարցաքննում է Հակոն:

Գիքոն, զարմացած դեմք ընդունած, երդվում է, որ տեղյակ չէ.

-Ի՞նչ կապոց, ի՞նչ փարա, ընծի ուրդից ըղբան փարա,- միամիտ է ձևանում Գիքոն:

Շատ համոզելուց, խնդրելուց, բարկանալուց հետո, վերջապես, Գիքոն կոտրվում է.

-Հա՛, Հակո՛, ի՞նչ ես խառնվել, ի՞նչ պարտք, ի՞նչ բան, գործի՛դ աշե, երբ կըրցար՝ կուդաս, չկրցար էլ՝ ջանդ սաղ էղնի,- հարցը փակում է աղա Գիքոն:

\*\*\*

Ուստա Հակոն միսը միշտ պատվիրում է աղա Գիքոյին: Պատահում է՝ պատվիրած էլ չի լինում, մեկ էլ տեսար ինքն է բերում մի ամբողջ ազդր կամ էլ ոչխարի կեսը.

-Մատղաշ է, լավ միս է, կերե՛ք, հետո հաշիվը կփագեք,- միսը դնում է ու հեռանում:

Գիտի, որ Հակոն պարտաձանաչ մարդ է:

Մի օր էլ սովորականի նման աղա Գիքոն գալիս է Հակոյի հետ զրուցելու: Հակոն կոշկագործ վարպետ է, բայց կարդացած, գրքասեր մարդ է, մասնակցել է Առաջին համաշխարհայինին, ինչպես Գիքոն է ասում՝ «աշխարհ տեսած մարդ է», համ էլ Հակոն երեք լեզու գիտի՝ թուրքերեն, պարսկերեն, ռուսերեն, խոսքի մեջ այդ լեզուներով մեջբերումներ է անում, ասացվածքներով համեմունք է պատմությունները: Դրա համար էլ աղա Գիքոյին հետաքրքիր է Հակոյի հետ:

Մի օր զրուցելիս Գիքոն հարցնում է.

-Հակո՛, իմացե՛լ ես, կըսեն, թե յաշիկըմ բըղի էղնի, մեջը բըղի պարեն, երգեն, մենք էլ աշենք, կըոնա՞ էղնի:

Հակոն քթի տակ ժպտում է.

-Է՛, Գիքո՛, դու ես գիմնազ ավարտել, ընծի կըհարցնես, դե օր կըսեն, ուրեմն կէղնի:

Այսպես զրուցում, թեյ են խմում, երբ Գիքոն պատրաստվում է գնալու, Հակոն հաշվում և տալիս է մսի պարտքը: Գիքոն տեղավորում է դրամը, բարի գիշեր է մաղթում և հեռանում: Չանցած մեկ ժամ՝ Գիքոն մոայլված ետ է գալիս.

-Հակո՛, դու փարեն տըվեցիր, չէ՞,- մտազբաղ հարցնում է՝ աչքերը պտտեցնելով տան անկյուններով:

-Հա՛, հըբը ի՞նչ էրեցի, դու էլ ջեբըդ դրեցիր, մոռացա՞ր, ա՛յ մարդ: Կա՛-չկա՛ կորցրել ես:

Գիքոն խոսքի մեջ անընդհատ հարցնում է.

-Հակո՛, փարեն տըվեցիր, չէ՞...

Գիքոն գնում է, բայց օդից կախված ինչ-որ տհաճ բան է մնում: Արաքսյան խելոք, հեռատես կին է լինում, ասում է.

-Հակո՛, էս մարդը կմտածե, օր մեր տան մեջ է փողը գցել, մենք էլ գտել ենք, չենք տվել: Արի ետևից էրթանք, էս ցուրտ ձմռան գիշերով վո՞վ կա, օր վով էլ գըղնի, կըգղնինք, կուղանք իրան, լավ կեղնի:

Այդպես էլ անում են: Նավթոտած լաթերով ջահ են վառում և ամուսիններով բռնում են աղա Գիքոյի տան ծամփան: Համարյա տան մոտ՝ մի քիչ հեռու, երևի այնտեղ, որտեղ աղան հոգացել էր բնական կարիքը, ընկած էր դրամը՝ 150 ռուբլին: Ուրախանում են, թակում են դուռը, աղա Գիքոն բացում է և.

-Ա՛յ մարդ, ախր ես կըհիշեի,, օր Հակոն փարեն տվել է:



## ԲՈՎԱՆ ԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՆՑՅԱԼԻՑ ՄԻ ԿԱԹԻԼ .....	3
ՎԵՐԱԴԱՐՁ .....	10
ՄԱՆԿՈՒԹՅԱՆՍ «ՍՈՒՆԱԿԸ» .....	12
ՁԿԱՆ ԽԱՂԸ .....	17
ՄՈՌԱՑՎԱԾ ԵՐԱԶԸ .....	19
ՍՈՒՐԲ ՍԱՐԳԻՍԸ .....	22
ԲՈՒՄԵՐԱՆԳ .....	26
ԱՌԿԱՅԾՈՒՄԼԵՐ .....	32
ՍՈՒՆԸ .....	37

## ԱՆՄԱՀՈՒԹՅՈՒՆ

Սպասում էի՝ տարիներս անցնեն .....	44
Սուղ էր ժամանակը .....	44
Նստել ենք զրույցի դեմ դիմաց .....	45
ԾԱՆՐԱՅԱԾ ՁՐԵՐ .....	46
Բաժանվել են մեծ երկվությանը միտքս ու հոգիս .....	46
ՏԵՍԻԼՔ .....	47
Կյանքիս վերջին քառամյակը .....	47
2016 ԱՊՐԻԼ .....	48

## ՍԻՐՏՍՍ ԷԼԻ ԻՆՁ ԿՄՆԱ

Ինձ թվում էր՝ էլ բան չկա երգելու .....	50
ՔԵՉ .....	50
Այնպե՛ս սիրիր, որ քո սիրուց .....	51

Եթե, իրո՞ք, քեզ ձմռանն են գտնելու . . . . .	51
ՈՒՐԻՇ ԱՇՈՒՆ . . . . .	52
Դու այս ե՞րբ եկար, աշո՞ւն . . . . .	53
Տվեցի չափսուսալով . . . . .	54
Կարոտներս թե բաժանեմ աշխարհներին . . . . .	54
Մեկ էլ տեսար ներսս մթնում . . . . .	55
Ընկալուչի մեջ քո ձայնը . . . . .	56
Սև ամպերը սև բոթի պես . . . . .	57
Ծխում ես, ծխում ու չես այրվում . . . . .	57
Դու կգնաս, բայց ես չեմ գա . . . . .	58
Տխո՞ւր թախի՞ծ, գիշերվա խիտ քողի նման . . . . .	58
Ինչպե՞ս ասեմ, որ չեմ տեսել . . . . .	59
Մանկան ձեռքի փուչիկի պես . . . . .	59
Թներ տվեցի, որ թռիչքդ տեսնեի . . . . .	60
ԿԱՐՈՏ . . . . .	60
ՀԱՅՐ, ԳԼԱՍ ԲԱՐՈՎ . . . . .	61
ԻՂՁ . . . . .	62
ԹԱԼԻՇ . . . . .	62
Հոգու խիղճն են, սրտի դուռն են . . . . .	63
ՏԱՏԻԿԻՍ . . . . .	63
ՕՐԻՆԱՉԱՓՈՒԹՅՈՒՆ . . . . .	64
Ծնվեի նորից մեկ ուրիշ անգամ . . . . .	64
ՆԻՐՎԱՆԱ . . . . .	65
Այս ի՞նչ շատ են առեղծվածները կյանքում . . . . .	65
Հոգիս ծով է կապուտակ . . . . .	66
Երբ շատ է քո ասելիքը . . . . .	66
Սենյակիս մեջ կիսալույս . . . . .	67
ՄՏՈՐՈՒՄ . . . . .	67
Դուք տեսե՞լ եք, թե ինչպես են . . . . .	68

# ԱՐՄԵՆՈՒԴԻ ՄԽԻԹԱՐՅԱՆ-ՎԼԻՍԱԿՆՅԱՆ

## ԾԱՆՐԱՉԱԾ ՁՐԵՐ

Պատմվածքներ, բանաստեղծություններ

Հրատարակչության տնօրեն՝ Արմինե Քոչարյան

Խմբագիր՝ Անդրանիկ Կարապետյան

Հրատ. խմբագիր՝ Արմեն Ավանեսյան

Սրբագրիչ՝ Ռոզա Հովհաննիսյան

Գեղարվեստական ձևավորումը՝ «Արմավ» հրատարակչության

Չափսը՝ 60x84 1/16  
Թուղթը՝ օֆսեթ 70գ/մ<sup>2</sup> 1.8 ուռ.  
Ծավալը՝ 4.5 տպ. մամուլ  
Տպաքանակը՝ 250  
Տառատեսակը՝ Ghabuzian Tigran  
Գինը՝ պայմանագրային



**издательство АРМАВ**

Ք. Երևան, Շիրազի 24 շ. 48 բն.  
հեռ.՝ 099 37-31-30  
էլ.փոստ՝ armav-hrat@mail.ru

Г. Ереван, ул. Шираза 24 д. 48 кв.  
тел.՝ +374-99-37-31-30  
Email: armav-hrat@mail.ru